# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյան | Էմիլ Գրիգորյան | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | 1. «ՀՀ պետական պահպանության ծառայության 30 տարի» հոբելյանական մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված ութ գագաթներով բազմանկյուն մեդալից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է մուգ կապույտ, կենտրոնական մասում չորս հավասարաչափ լայնության դեղին զոլերով մետաքսյա 24մմ լայնություն ունեցող ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բարձրությունները նույնն են՝ 39մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27մմ է, ներքևինը՝ 47մմ, հաստությունը՝ 1մմ: Կախիչի վերին մասի կենտրոնից մինչև ներքին գագաթը 50մմ է: Կախիչը հակառակ երեսում ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրացնելու համար: Մեդալը ոսկեգույն է, պատրաստված պղնձի հատուկ համաձուլվածքից, ունի 48,5մմ արտագծած տրամագիծ, հաստությունը 3,0մմ է, որի սահմանային շեղումը կարող է լինել 0.05մմ, քաշը՝ 36 գրամ: Մեդալի դիմերեսի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության խորհրդանիշը: Մեդալի ներքևի մասում կորության վրա գրված է «30 ՏԱՐԻ»: Մեդալը դարձերեսի կողմից ունի «1992», «2022» գրվածքները: Մեդալի միանմանությունն ապահովելու համար այն պատրաստված է հատուկ պրուֆ տեխնոլոգիայով և դրոշմման եղանակով: Մեդալի տուփ: Տուփի չափսերը՝ 100x110մմ, բարձրությունը 30մմ, կազմված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում մեդալի չափսերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Տուփի դիմերեսի վրա առկա է համապատասխան լոգոտիպի UV տպագրություն: Տուփի գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Թույլատրելի շեղումը ±5մմ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |